Հաստատում եմ՝
Հյուսիսային
համալսարանի
ռեկտոր՝
Ռ. Ջանինյան
“05”սեպտեմբերի 2022թ.

Հաստատված է
համալսարանի
գիտական խորհրդի
2022թ. սեպտեմբերի 5-ի
որոշմամբ (արձ. № 1)

ԿԱՐԳ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ

2022թ

ԿԱՐԳ
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգը սահմանում է Հյուսիսային համալսարանի (այդ թվում բժշկական քոլեջի և ավագ դպրոցի) պրոֆեսորադասախոսական կազմի և վարչական, ուսումնաօժանդակ և վարչատնտեսական տարակարգերի աշխատողների, այդ թվում նաև գիտահետազոտական աշխատանքներ իրականացնողների խրախուսման կարգը:

1.2. Սույն կարգի նպատակն է խրախուսման համապատասխան ձևերի միջոցով խթանել համալսարանում իրականացվող ուսումնամեթոդական աշխատանքների որակի ապահովման շարունակականությունը, դասավանդման մեթոդական լավագույն փորձի կիրառումը, համալսարանում իրականացվող գիտահետազոտական աշխատանքների, այդ թվում փորձարարական մշակումներին ուղղված աշխատանքների ընդլայնումը, համալսարանի կրթական գործընթացներում դրանց կիրառման հնարավորությունների ապահովումը, համալսարանի վարչական ստորաբաժանումների կողմից իրականացվող աշխատանքների պատշաճ իրականացումն՝ ուղղված համալսարանի (այդ թվում բժշկական քոլեջի և ավագ դպրոցի) կողմից բարձրորակ կրթական ծառայությունների մատուցմանը:

1.3. Համալսարանում, բժշկական քոլեջում և ավագ դպրոցում կիրառվում են խրախուսման հետևյալ ձևերը.

ա) շնորհակալության հայտարարում,

բ) միանվագ դրամական պարգևատրում,

գ) հուշանվերով պարգևատրում,

դ) լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում,

1.4 Համալսարանում, բժշկական քոլեջում և ավագ դպրոցում խրախուսման ձևերը կիրառվում են համալսարանի ռեկտորի կողմից՝ համապատասխան հրամանով, սույն կարգով նախատեսված զեկուցագրերի հիման վրա կամ ռեկտորի նախաձեռնությամբ:

1.5 Մինչ զեկուցագրերի հիման վրա խրախուսում կիրառելը ռեկտորատի և մանկավարժական խորհրդի համապատասխան նիստում ուսումնասիրվում են

խրախուսման հիմքերը, անհրաժեշտության դեպքում զեկուցագիր ներկայացնողից պահանջելով սույն կարգին համապատասխան լրացուցիչ տվյալներ:

1.6 Սույն կարգի 1.3. կետի «բ» ենթակետով նախատեսված խրախուսման ձևերը կիրառվում են ամսական, եռամսյակային, կիսամյակային պարբերականությամբ կամ մեկանգամյա վճարվող վարձատրությունն է ուսումնական տարվա ընթացքում:

2. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ/ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԵՎ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱՐԱԿԱՐԳԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Համալսարանում, բժշկական քոլեջում և ավագ դպրոցում իրականացվող ուսումնամեթոդական աշխատանքների համար խրախուսման ձևերը կիրառվում են համալսարանի ռեկտորին ուղղված համապատասխան ամբիոնի վարիչների, դեկանների, բժշկական քոլեջի և ավագ դպրոցի տնօրենի զեկուցագրերի, ինչպես նաև որակի ապահովման վարչության կողմից տրամադրված ուսանողների կողմից դասախոսների/ուսուցիչների դասավանդման արդյունավետության գնահատման արդյունքների հիման վրա, որտեղ նշվում է խրախուսման ներկայացված դասախոսի/ ուսուցչի խրախուսման ձևը, ամփոփ նկարագրվում է խրախուսման հիմքերը, անհրաժեշտության դեպքում կցելով համապատասխան փաստաթղթեր:

2.2. Սույն կարգի 1.3. կետի «բ» ենթակետով նախատեսված խրախուսման ձևերը կիրառվում են նաև դասավանդող ամբիոնի վարիչին խրախուսելու դեպքում: Ամբիոնի վարիչին խրախուսելու նպատակով զեկուցագիրը ներկայացվում է ուսումնական աշխատանքները համակարգող պրոռեկտորի կողմից:

2.3 Սույն կարգի 1.3. կետի՝ բ՝ ենթակետով նախատեսված խրախուսման ձևով կարող են խրախուսվել համալսարանի պրոֆեսորադասախոսական/ուսուցչական կազմի այն անդամները, որոնք ուսումնական տարվա ընթացքում պատշաճ կատարել են իրենց աշխատանքային պարտականությունները, այդ թվում, չունեն անհարգելի բացակայություններ, ուշացումներ, թույլ չեն տվել համալսարանի ներքին կարգապահական և էթիկայի նորմերի խախտումներ, համապատասխան ամբիոնի՝ իսկ տարբեր ամբիոններում դասավանդելու դեպքում՝ միաժամանակ բոլոր համապատասխան ամբիոնների և մանկավարժական խորհրդի կողմից դասախոսի/ուսուցչի դասավանդման մեթոդիկան գնահատվել է որպես

միջազգային լավագույն փորձի վրա հիմնված մեթոդիկա: Դասախոսը/ուսուցիչը միաժամանակ համալսարանի վարչական աշխատող հանդիսանալու դեպքում անհրաժեշտ է, որպեսզի ապահովված լինեն սույն կարգի 2.6. կետի պահանջները:

2.4 Համալսարանում իրականացվող վարչական, ուսումնաօժանդակ և վարչատնտեսական տարակարգերի աշխատողների համար սույն կարգի 1.3. կետի «բ» ենթակետով նախատեսված խրախուսման ձևերը կիրառվում են համալսարանի ռեկտորի, ուսումնական վարչության և մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի համատեղ որոշման հիման վրա, որտեղ նշվում է խրախուսման ներկայացված աշխատողի խրախուսման ձևը, ամփոփ նկարագրվում են խրախուսման հիմքերը, անհրաժեշտության դեպքում կցելով համապատասխան փաստաթղթեր: Ռեկտորին անմիջական ենթակա աշխատակիցներին խրախուսելու համար ռեկտորն է նախաձեռնում վերջիններիս նկատմամբ խրախուսում կիրառելու դեպքը և ձևը:

1.7 Սույն կարգի 1.3. կետի «բ» ենթակետով նախատեսված խրախուսման ձևերը կիրառվում են նաև վարչական, ուսումնաօժանդակ և վարչատնտեսական տարակարգերի աշխատողների նկատմամբ ամսական, եռամսյակային, կիսամյակային պարբերականությամբ կամ մեկանգամյա վճարվող վարձատրությունն է ուսումնական տարվա ընթացքում:

2.5 Սույն կարգի 1.3. կետի «բ» ենթակետով նախատեսված խրախուսման ձևով կարող են խրախուսվել այն վարչական, ուսումնաօժանդակ և վարչատնտեսական տարակարգերի աշխատողները, որոնք ուսումնական տարվա ընթացքում պատշաճ կատարել են իրենց աշխատանքային պարտականությունները, այդ թվում, չունեն անհարգելի բացակայություններ, ուշացումներ, թույլ չեն տվել համալսարանի ներքին կարգապահական և էթիկայի նորմերի խախտումներ, որակի ապահովման վարչությանը ներկայացված աշխատանքների տարեկան հաշվետվությունը գնահատվել է դրական: Վարչական, ուսումնաօժանդակ և վարչատնտեսական տարակարգերի աշխատողներից այն աշխատողները, ովքեր միաժամանակ համալսարանում հանդիսանում են դասախոս/ուսուցիչ անհրաժեշտ է, որպեսզի ապահովված լինեն սույն կարգի 2.3. կետի պահանջները:

2.6 Պրոֆեսորադասախոսական/ուսուցչական կազմի և վարչական, ուսումնաօժանդակ և վարչատնտեսական տարակարգերի աշխատակիցների նկատմամբ սույն կարգի 1.3. կետի «բ» ենթակետով սահմանված խրախուսման ձև կիրառելու դեպքում, կիրառելու մասին որոշում ընդունելուց հետո

խրախուսվողին հատկացվում է միանվագ ֆինանսական հատկացում՝ ռեկտորատում հաստատված չափաքանակով:

3. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Համալսարանում իրականացվող գիտահետազոտական աշխատանքների համար խրախուսման ձևերը կիրառվում են համալսարանի ռեկտորին ուղղված խրախուսվող աշխատակցի անմիջական ղեկավարի, խրախուսվող ուսանողի դեպքում՝ դեկանի՝ համալսարանի գիտահետազոտական աշխատանքները համակարգող պրոռեկտորի հետ համաձայնեցված զեկուցագրերի հիման վրա, որտեղ նշվում է խրախուսման ներկայացված աշխատողի կամ ուսանողի խրախուսման ձևը, սույն կարգի 1.3. կետի «բ» ենթակետով սահմանված խրախուսման ձևի կիրառման դեպքում՝ խրախուսման չափը, ամփոփ նկարագրվում է խրախուսման հիմքերը, անհրաժեշտության դեպքում կցելով համապատասխան փաստաթղթեր: Ռեկտորին անմիջական ենթակա աշխատակիցների համար զեկուցագիր չի ներկայացվում և ռեկտորն է նախաձեռնում վերջիններիս նկատմամբ խրախուսում կիրառելու դեպքը և ձևը:

3.2. Գիտահետազոտական աշխատանքների համար սույն կարգի 1.3. կետի «բ» ենթակետով նախատեսված խրախուսման ձևերը կիրառվում են խրախուսման հիմքերը առկա լինելուց հետո՝ հետո մեկ ամսյա ժամկետում:

3.3. Սույն կարգի 1.3. կետի «բ» ենթակետով նախատեսված խրախուսման ձևով գիտահետազոտական աշխատանքների համար կարող են խրախուսվել այն աշխատակիցները, որոնք համալսարանի բազայի հիման վրա կիրականացնեն համապատասխան գիտահետազոտական աշխատանքներ, այդ թվում, բնության օրենքների, մարդու գործունեության, հասարակության կառուցվածքի և զարգացման հիմնական օրինաչափությունների մասին ունեցած գիտելիքների ընդլայնմանն ու նոր գիտելիքների ձեռքբերմանն ուղղված տեսական կամ փորձարարական գործունեություն, կիրականացնեն կիրառական՝ որոշակի խնդիրների լուծմանը նպատակաուղղված հետազոտություններ, կհեղինակեն և հկրատարակեն գիտական արժեք ներկայացնող աշխատություններ, կապահովեն դրանց կիրարկումը համալսարանի կրթական գործունեության մեջ, կնպաստեն այլ գիտահետազոտական հաստատությունների միջև փոխհամագործակցության ձևավորմանը, իրենց գործողություններով կհանգեցնեն համալսարանի՝ որպես

ակտիվ և արդյունավետ գիտահետազոտական գործունեություն իրականացնող հաստատության վարկանիշի բարձրացմանը, կնպաստեն համալսարանի գիտահետազոտական գործունեության իրականացմամբ ֆինանսական միջոցների և այլ համապատասխան ռեսուրսների ներգրավմանը:

3 Սույն կարգի 1.3, կետի «բ» ենթակետով սահմանված խրախուսման ձև կիրառելու դեպքում, կիրառելու մասին որոշում ընդունելուց հետո խրախուսվող աշխատողին և կամ ուսանողին կհատկացվի համապատասխան ֆինանսական պարգևատրում, ռեկտորատում հաստատված չափաքանակով: